Այս մտքով երգում է Յովհան Երզնկացին իւր շարականի մէջ ԺԳ. դարում, նոյն երգի միտքը կրկնելով և իւր ներբողի մէջ.

Հովուին հսկողին ճշմարտի եւ քաջ հովուին
պատկերի հովիւքն եղեն հետեւողք.
Զոր ամփոփեցին զմարմինն մաքուր մերձ ի
յայրն Մանեայ մեզ դեղ ախտից մաքրու-
թեան:

Իսկ սէրովբէների երևիլը և Ս. Լուսաւորչին պատգամ տալը, որ պատմել է մեծն Վարդան իւր ներբողի մէջ ԺԳ. դարում, դարձեալ երգւում է Երզնկացու շարականի մէջ երկու տեղ.

Վեցթեւեան սրոբէից կիզիչ կենդանեացն
Եղեւ տեսանող հոգւով կենդանին,
Զանդնդախոր զձորն երկնից կամար յօ-
րինեալ:

Ձորի մէջ սերովբէների իջման տեղում, ըստ աւանդութեան, Ս. Լուսաւորիչ խաչեր կանգնեց. Վարդանն ասում է, որ «այժմ գեղակ է տեղին, ուր խաչքն կան հրաշագործք, և անուն գեղջըն կոչի Սերովբէք մինչև ցայսօր.» Նոյն անունն այդ տեղը կրում է և այժմ։ Եւ նոյն շարականի մէջ,